

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
Պապոյան Ա. Ա.**

Օտար լեզվով ընթերցանության ուսուցման նպատակը «հասուն ընթերցանության» նվազագույն մակարդակ ապահովելն է, որը թույլ է տալիս սովորողներին ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն անձանոթ տեքստ կարդալիս: Ըստ ԼԻԻՀ-ի՝ օտար լեզվի դասավանդման ընթացքում տարբերակվում են ընթերցանության հետևյալ տեսակները.

- թռուցիկ ընթերցանություն,
- մանրակրկիտ ընթերցանություն,
- որոնողական ընթերցանություն,
- տեքստի ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ընթերցանություն:

Հռոկվածում փորձ է արվում լուսաբանել ոչ միայն օտար լեզվով ընթերցանության ուսուցման ընդհանուր նպատակը, այլ նաև անդրադարձ է կատարվում ընթերցանության յուրաքանչյուր տեսակի նպատակին և առանձնահատկություններին:

Բանալի բառեր. «հասուն» ընթերցանություն, թռուցիկ ընթերցանություն, որոնողական ընթերցանություն, մանրակրկիտ ընթերցանություն, ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ընթերցանություն, խնդիրներ:

Օտար լեզվով ընթերցանության նպատակն այսպես կոչված «հասուն ընթերցանության» մինիմալ մակարդակ ապահովելն է, որը հետագայում հնարավորություն է ընձեռում ցանկության դեպքում զբաղվելու ինքնակրթությամբ, գիտելիքների կատարելագործմամբ, ազատ օգտվելու օտարալեզու գրականությունից [1]:

Ընթերցանության ուսուցման նպատակի իրագործումը մասնակիորեն պայմանավորված է այն հանգամանքով, թե կոնկրետ դեպքում ընթերցանության որ տեսակներն են ուսուցման գործընթացում իրականացվում:

Մեթոդական գրականության մեջ ընթերցանության տեսակների դասակարգումը մինչև այժմ կատարվում էր, ինչպես նշում է Ս. Կ. Ֆոլոմկինան, *տեքստի շուրջ տարվող աշխատանքի կազմակերպման հիման վրա* [2]:

Ս. Կ. Ֆոլոմկինան իրավացիորեն նշում է, որ ընթերցանության գործընթացի վրա ազդող բազմաթիվ գործոններից վճռորոշ են երկուսը՝

ա) տեքստում կողմնորոշվելու կարողությունը,

բ) ստացած տեղեկատվության լիակատարության, խորության և ճշգրտության աստիճանի որոշումը [2]:

Վերոհիշյալ չափանիշերին համապատասխան՝ առանձնացվում են ընթերցանության հետևյալ տեսակները՝ *թռուցիկ (skimming, scanning), մանրակրկիտ (detailed), որոնողական (selective), ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու (reading for gist)*: Հոդվածում վերլուծվում է ընթերցանության յուրաքանչյուր տեսակն առանձին-առանձին և առաջարկվում են մի շարք ռազմավարություններ, որոնք նպաստում են ընթերցանության տվյալ տեսակի համար անհրաժեշտ կարողությունների զարգացմանը:

Ընթերցանության տեսակների վերոհիշյալ դասակարգումը համահունչ է ԼԻԻՀ-ում ներկայացված ընթերցանության տեսակների հետ, այնուամենայնիվ ԼԻԻՀ-ում տրված դասակարգման առավելությունն այն է, որ այստեղ ընթերցանության յուրաքանչյուր տեսակի համար մշակված են համապատասխան չափորոշիչներ [3]:

Թռուցիկ և ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ընթերցանության տեսակները կարելի է հարաբերակցել համադրական, իսկ մանրակրկիտը՝ վերլուծական ընթերցանությանը:

1. *Ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ընթերցանություն (reading for gist)*

Տեքստի ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ժամանակ ընթերցողի նպատակն է ծանոթանալ տարբեր ժանրերի տեքստերի բովանդակությանը: Նման դեպքում ուշադրությունը կենտրոնացվում է գործողությունների զարգացմանը և հիմնական տեղեկատվությանը:

Հասուն ընթերցանության նվազագույն մակարդակի դեպքում դպրոցականների համար այս տեսակի ընթերցանության արագությունը ընդհանուր 180-190 բառ է:

Տեքստի ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ընթերցանության համար առաջարկում ենք հետևյալ տիպի առաջադրանքներ.

- Կարելի է նկարները ցուցադրել՝ աշակերտներին առաջարկելով դասավորել դրանք այնպիսի հերթականությամբ, որ արտահայտեն տեքստի գործողությունների (իրադարձությունների) հետագա զարգացումը:

- Վերնագիրը և թեման քննարկելուց հետո սովորողներին առաջարկվում է կարդալ առաջին և վերջին պարբերությունները՝ յուրաքանչյուր պարբերության առաջին նախադասությունը՝ տեքստի ընդհանուր թեման պարզելու նպատակով: Այս առաջադրանքը կատարելուն հատկացվում է սահմանափակ ժամանակ: Այս քայլը մղում է սովորողներին տեքստն ավելի մանրամասնորեն ուսումնասիրել:

- Վերոհիշյալ խմբին է դասվում այսպես կոչված “KWL” (ԳՈՒՍ) ռազմավարությունը, որի բնույթը, կառուցվածքը և բովանդակությունը արտահայտվում է հետևյալ կերպ [4].

Աղյուսակ 1.

What We <u>K</u> now	What We <u>W</u> ant to know	And What We <u>L</u> earnt

- Պատկերային ներկայացումը (visualizing) այնպիսի գործընթաց է, որի շնորհիվ, զարգացնելով երևակայությունը, աշակերտը փորձում է մտովի պատկերացնել տեքստում նկարագրված իրադարձությունը, հերոսին, գործողությունը և այլն: Այս հմտությունը ձևավորելու համար կարելի է կիրառել հետևյալ քայլերը.

ա) Տեքստի մի հատված բարձրաձայն ընթերցելուց հետո ուսուցիչը հանձնարարում աշակերտներին ասել, թե ինչ են նրանք պատկերացնում:

բ) Ուսուցիչը բարձրաձայն կարդում է տեքստից մի հատված, այդ ընթացքում սովորողները փակում են աչքերը և փորձում մտովի պատկերացնել կարդացածի բովանդակությունը: Այնուհետև աշակերտները գրում կամ նկարում են պատկերացրածը:

Նպատակահարմար է սկսել պարզ նկարագրությունից՝ աստիճանաբար անցնելով առավել բարդի:

գ) Ընթերցանության ընթացքում ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին քարտեզի վրա նշել այն տեսարժան վայրերը, որոնց մասին հեղինակը պատմում է: Մա օգնում է սովորողներին պատկերավոր ձևով մտապահելու նոր տեղեկատվությունը:

դ) Մի այլ դեպքում աշակերտներին հանձնարարվում է խառը նկարներից առանձնացնել կարդացածին համապատասխանող նկար:

2. Թռուցիկ ընթերցանություն (skimming, scanning)

Թռուցիկ ընթերցանության նպատակն ամենաընդհանուր գծերով բովանդակության մասին պատկերացում կազմելն է, ինչի հիման վրա կարդացողը որոշում է, թե արդյոք իրեն պետք է, հետաքրքրում է/չի հետաքրքրում տեքստում պարունակվող տեղեկատվությունը: Դրա անհրաժեշտությունը որոշելու համար բավական է կարդալ վերնագրերը կամ ենթավերնագրերը, նախադասությունները, առանձին հատվածները և այլն: Ըստ էության՝ տեղի է ունենում ընտրովի ընթերցանություն:

Ընթերցանության այս տեսակի համար արագության չափանիշերը դեռևս վերջնականապես որոշված չեն: Ընդունված է բուպետում 500-600 բառի սահմանը:

Թռուցիկ ընթերցանությունը զարգացնելու համար առաջարկում ենք հետևյալ առաջադրանքները.

- Սովորողներին առաջարկվում է առանձնացնել ճիշտ և սխալ հաստատումները (true-false technique): Միայն հաստատումներն ըստ էության չեն համապատասխանում տեքստի բովանդակությանը: Նախադասությունները կազմելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ հաստատումներում/պնդումներում պետք է ընդգրկել ընթերցվող տեքստի հիմնական և ոչ թե երկրորդական փաստերը:

- Մի այլ դեպքում տեքստն ամբողջությամբ ներկայացվում է անավարտ պարբերությունների տեսքով: Աշակերտներն ընտրում են յուրաքանչյուր պարբերության շարունակությունը (երկուսից մեկը): Նույն կերպ նրանք ընթերցում են երկրորդ պարբերությունը՝ ընտրելով ճիշտ պատասխանը:

Աղյուսակ 2.

The darkness kisses the gentle fields, The stars smile sadly at their deeds, Their tearful eyes are so bright, That they twinkle through the night.	
Again I am in my room after my long flight, It's starry, charming and beautiful night, As though there is a torch light.	But look, a star is falling, Think of something, be quick, my darling, And it will certainly come true, I think its mirage, don't you?
Actually I want to understand what is money, Why do people take it for God, oh mummy,	
I look around and see a white horse, It's he who speaks in human – being's voice.	And to my great surprise "You will know" I hear a voice,

3. Մանրակրկիտ/մանրագնին ընթերցանություն (detailed reading)

Ընթերցանության այս տեսակի իրականացումը ենթադրում է բովանդակության ամբողջական ընկալում (100%): Այստեղ հատկանշական է նաև ընթերցանության արագության նվազագույն մակարդակը (1 րոպեում 50-60 բառի սահմաններում):

Մանրակրկիտ ընթերցանությունը զարգացնելու համար առաջարկում ենք հետևյալ առաջադրանքները.

▪ Իմաստային քարտեզագրման (mind mapping) դեպքում ուսուցիչն աշակերտների օգնությամբ կառուցում է իմաստաբանական քարտեզ, որը գծագրի տեսքով, աստիճանական կարգով ներկայացնում է տեքստի բովանդակությունը: Ուսուցիչը Power Point ծրագրով ցույց է տալիս ընդհանուր թեման:

Քայլ 1.

Գծապատկեր 1.


Does money make the World go round?

Այնուհետև հարցնում է աշակերտներին, թե ինչի մասին է տեքստը: Հարցերի բնույթը պետք է կազմել այնպես, որ աշակերտների ուշադրությունը կենտրոնանա հատկապես բանալի բառային միավորների վրա: Մինչ սովորողներն արտահայտում են իրենց կարծիքները, ուսուցիչը կամ աշակերտներից մեկը կազմում է իմաստաբանական քարտեզ՝ սովորողների առաջարկած վարկածները խմբավորելով ըստ ընդհանուր կարգերի, որոնք արտացոլում են տվյալ

տեքստի կառուցվածքն ու բովանդակությունը:

Քայլ 2.

Գծապատկեր 2.




Այնուհետև սովորողներին ցուցադրվում են տեքստի առանձին հատվածներ (վերնագիր, ենթավերնագրեր, ...)՝ որոշ փաստեր ճշգրտելու նպատակով:

Աշակերտները փորձում են շարունակել իմաստային քարտեզի կառուցումը, ինչի շնորհիվ տեքստի թեման ավելի հստակ է պատկերվում:

Քայլ 3.

Գծապատկեր 3.



Իմաստային քարտեզագրման շնորհիվ առանձին բառերն ու հասկացությունները միաձուլվում, ամբողջական տեսք են ստանում, ինչն օգնում է աշակերտին հասկանալու, ամփոփելու և գնահատելու տեղեկատվությունը՝ տեսանելի դարձնելով տեքստի հասկացական հիմքը [6]: Այս ամենն օժանդակում է սովորողին գաղափար կազմել տեքստի մասին:

▪ Մանրակրկիտ ընթերցանությունը զարգացնելու մի հետաքրքիր ձև է հարցումը կամ ինքնահարցումը (self questioning)

Ինքնահարցման շնորհիվ աշակերտները կարդալու ընթացքում փորձում են պատասխանել տեքստին վերաբերող հարցերին: Այս հարցերը և խառը տրվող պատասխաններն օգնում են նրանց ավելի լավ համատեղել նախկինում ունեցած գիտելիքները տեքստում պարունակվող նոր տեղեկատվության հետ: Առավել արդյունավետ է հարցերի հետևյալ տեսակների կիրառումը.

ա) Բազմակողմ հարցադրում (multiple questions)

Բազմակողմ հարցադրումներն օգտագործվում են ն' տեքստը հասկանալու կարողությունների ձևավորման, ն' ստուգման համար: Վերջիններս առնչվում են ոչ միայն բուն տեքստում զետեղված տեղեկատվությանը, այլ նաև մղում սովորողներին կարդալ «տողերի միջև»: Դրանք կարող են ուղղվել կոնկրետ բառին, արտահայտությանը, նախադասությանը, պարբերությանը, ինչպես նաև ամբողջ տեքստին:

Բազմակողմ հարցադրումները կիրառվում են որպես «բանալի»՝ օգնելով սովորողին հասկանալու տեքստի այս կամ այն լեզվական միավորը, նախադասությունը կամ պարբերությունը [5]:

բ) Այսպես կոչված «Wh հարցեր»-ի կիրառում

«Wh հարցեր»-ը հիմնականում վերաբերում են տեքստում պարունակվող փաստերին: Այնուամենայնիվ, դրանք կարելի է ձևակերպել նաև այնպես, որ աշակերտներին մղեն խորհելու:

- Why do you think that ...?
- What have you done if ...?

Այս տիպի հարցերին պատասխանելը ոչ միայն սովորեցնում է աշակերտներին ինքնուրույն մեկնաբանել, այլ նաև նպաստում է աշակերտ-աշակերտ համագործակցային հարաբերությունների զարգացմանը, քանի որ նրանք միմյանց հետ հաղորդակցվում, արտահայտում, բացատրում ու քննարկում են իրենց տեսակետները:

Պետք է նշել, որ առաջադրվող հարցերի բովանդակությունը պայմանավորված է նաև տեքստի կառուցվածքով, ոճով և ժանրով:

Ուսուցիչը պետք է մղի աշակերտներին ինքնուրույն կազմած հարցեր միմյանց տալ՝ տարբերակելով F, I, V, E հապավումներով արտահայտված հարցադրումների տեսակները. **F** – Factual questions, **I** – Inference question, **V** – Vocabulary questions, **E** – Experience questions:

▪ Վերընթերցումը (rereading) համարվում է կարևորագույն ռազմավարություններից մեկը, որի միջոցով սովորողները փորձում են հստակեցնել և լավ ըմբռնել տեքստում պարունակվող տեղեկատվությունը: Ուսուցիչը պետք է սովորեցնի աշակերտներին տեքստը կարդալ իմաստային հատվածներով՝ նպաստելով դժվարությունների հաղթահարմանը: Վերընթերցումը կարելի է զուգակցել հետևյալ աշխատանքների հետ.

ա) տվյալ պարբերությունից գտնել այն նախադասությունը, որտեղ խոսվում է ... մասին,

բ) տեքստը բաժանել իմաստային խմբերի,

- զ) վերնագրել յուրաքանչյուր պարբերություն,
 - դ) ընդգծել յուրաքանչյուր պարբերության կարևոր նախադասությունը/միտքը,
 - զ) փնտրել օրինակներ, բացատրություններ՝ պարբերությունն առավել մանրամասնելու նպատակով,
 - է) փորձել հակիրճ ներկայացնել տվյալ պարբերության իմաստը,
 - ը) առանձնացնել տեքստի կարևորագույն հատվածները:
- Քանի որ ընթերցանության միջոցով հաղորդվում է ոչ միայն նոր տեղեկատվություն, այլև ներմուծվում է նոր բառապաշար, անհրաժեշտ է վերընթերցման ընթացքում իրականացնել նաև բառիմաստի բացահայտման տարբեր ռազմավարություններ:

4. Որոնողական ընթերցանություն (selective reading)

Որոնողական ընթերցանության նպատակն է անձանոթ տեքստում գտնել կոնկրետ տեղեկատվություն, փաստեր և այլն:

Այս տիպի ընթերցանությունն ուղղված է տեքստում կոնկրետ տեղեկատվություն գտնելուն: Այդ պատճառով էլ առաջադրանքը պետք է ճիշտ արտացոլի լուծման ենթակա խնդիրները:

Այս դեպքում առաջարկվում է տեքստը կարդալ ոչ թե ամենայն մանրամասնությամբ, այլ աչքի անցկացնել և կողմնորոշվել՝ գտնելով անհրաժեշտ տեղեկատվությունը: Այս աշխատանքը Լ. Զուկովան նմանեցնում է «հանրագիտարանից կոնկրետ տեղեկատվություն փնտրելուն, որի դեպքում կարիք չկա հանրագիտարանը ամբողջությամբ կարդալ» [7]: Այս դեպքում կարելի է առաջարկել հետևյալ առաջադրանքները.

- Ուսուցիչը նախապես առաջարկում է թեմային վերաբերող որոշակի հարցեր, որոնց պատասխանն աշակերտները պետք է գտնեն տեքստից: Աշխատանքը կարելի է սկսել փոքր պարբերություններից՝ աստիճանաբար անցնելով ավելի մեծ հատվածների: Տրամադրված ժամանակը պետք է խիստ սահմանափակ լինի, որպեսզի սովորողները տեքստն աչքի անցկացնեն և ոչ թե ամբողջությամբ կարդան:

Այս վարժության միջոցով աշակերտները սովորում են ընդհանրացնել ձեռք բերած գիտելիքներն ու լեզվական փորձը:

- «Նշումներ անելու» (note taking) ռազմավարությունը ևս նպաստում է որոնողական ընթերցանության զարգացմանը:

Այս աշխատանքն օգնում է աշակերտներին կարդալու ընթացքում ընկալելու, հասկանալու և համակարգելու նոր ստացված տեղեկատվությունը:

ա. Այս հմտությունը ձևավորելու համար սկզբնական շրջանում ուսուցիչը նախապես կազմում է աղյուսակներ, որոնք ընթերցանության ընթացքում լրացվում են աշակերտների կողմից:

բ. Մի այլ դեպքում նախադասությունը բաժանվում է մասերի: Ուսուցիչը ձախ կողմում գրում է անավարտ հիմնական նախադասությունները, աշակերտները աջ մասում լրացնում են վերջիններիս շարունակություններն այնպես, որ վերջում ստացվի համառոտ, ամբողջական տեքստ:

Ինչևէ, այս կամ այն ընթերցանության տեսակի իրականացմամբ է պայմանավորված վարժությունների, ռազմավարությունների, ինչպես նաև ստուգման եղանակների ընտրությունը: Ընդ որում պետք է հաշվի առնել հետևյալը. քանի որ ընթերցանության տեսակները տարբերվում են ըստ գործունեության արդյունքի, այսինքն՝ ըստ տեքստի բովանդակության ընկալման աստիճանի, տեղեկատվության ըմբռնման և հիմնական իմաստի ընկալման աստիճանը հնարավոր է սահմանել՝ համակցելով այն տեքստում պարունակվող ամբողջական տեղեկատվությանը:

ЦЕЛИ И ЗАДАЧИ ОБУЧЕНИЯ РАЗЛИЧНЫМ ТИПАМ ЧТЕНИЯ

Папоян А. А.

Цель обучения чтению на иностранном языке - обеспечить минимальный уровень зрелого чтения, позволяющий учащимся получать необходимую информацию при чтении незнакомого текста. Согласно CEFR, при обучении иностранному языку выделяют следующие типы чтения:

- беглое чтение,
- тщательное чтение;
- поисковое чтение;
- чтение для ознакомления с общим содержанием текста.

В статье делается попытка раскрыть не только общую цель обучения чтению на иностранном языке, но и цели и особенности каждого типа.

Ключевые слова: “Зрелое” чтение, тщательное чтение, поисковое чтение, чтение для ознакомления с общим содержанием текста, задачи.

THE GOALS AND OBJECTIVES OF TEACHING DIFFERENT TYPES OF READING

Բաբոյան Ա. Ա.

The goal of teaching reading in a foreign language is to provide “mature reading” minimal level, which allows students to gain full information from an unknown text they read.

According to the CEFR, several types of reading may occur while teaching a foreign language:

- skimming/scanning,
- detailed reading,
- selective reading,
- reading for gist.

The article tries to reveal not only the general goal of teaching reading in a foreign language, but also the objectives and peculiarities of each type.

Keywords: “mature” reading, skimming, scanning, selective reading, detailed reading, reading for gist, objectives.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստվածատրյան Մ. Գ. Օտար լեզվի դասավանդման մեթոդիկա: Երևան: «Լույս»: 1985: 238 էջ:
2. Фоломкина С. К. Обучение чтению на иностранном языке в неязыковом вузе. М.: Высшая школа. 2004. 253 с.
3. Common European Framework of Reference for Languages: Learning, Teaching, Assessment. Council of Europe, Cambridge University Press. 2001. 367 p.
4. Ogle D. M. KWL. A Teaching Model that Develops Active Reading of Expository Text. New York. The Reading Teacher. 1986. 14-32 p.
5. Sheils J. Communication in the Modern Languages Classroom. Council for Cultural Co-operation. Project No 12. Learning and Teaching. Modern Languages for Communication. Strasbourg. Council of Europe Press. 1993. 361 p.
6. Wood N. College Reading and Study Skills. New York. Holt Rinerhart and Winston. 1991. 183 p.
7. Zhukova L. P., Michurina K. A. Reading and Comprehension. Moscow. Vyssaja skola. 1982. 3-42 p.

Տեղեկություններ հեղինակի մասին

Պապոյան Ա. Ա. – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Վանաձորի պետական համալսարան

Էլ. փոստ annapapoyan@yandex.ru

Տրվել է խմբագրություն 09.10.2019

ՀՏԴ 376

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԴԵՐՈ ՕԺՏՎԱԾ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԵՏ
ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ: ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ
Մարության Լ. Ռ.**

Հոդվածը նվիրված է սոցիալական մանկավարժի դերին օժտված երեխաների հետ աշխատանքում: Խոսվում է «օժտվածություն», «օժտված երեխա» հասկացությունների, ինչպես նաև այդ երեխաների շրջանում սոցիալական մանկավարժի ծավալած գործունեության մասին:

Հոդվածը ներառում է փորձարարական մաս. այն կատարվել է Վանաձորի դպրոցներում, կենտրոններում և մարզպետարանի համապատասխան բաժնում: Տվյալների բազան առանձին-առանձին ներկայացված են «Հավելվածների» տեսքով /աղյուսակով/:

Հատկապես շատ կարևոր է օժտված երեխաներին ճիշտ բացահայտելն ու արդյունքները ծնողներին, ուսուցիչներին և մասնագետներին փոխանցելը:

Բանալի բառեր. օժտված երեխա, սոցիալական մանկավարժ, տաղանդ, ուսումնասիրություն, մանկավարժի գործունեության ոլորտ:

Աշխատանքում օգտագործվել են սոցիալական ոլորտի (մասնագիտական) գրականություն, բայց ամբողջ աշխատանքը կառուցված է փորձարարական արդյունքների վրա:

Մարդկության զարգացման բոլոր ժամանակներում գոյություն են ունեցել մարդկային վարքաձևերի շեղումներ՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական ուղղվածությամբ, օրինակ՝ նորմայից շեղումներ են համարվում և՛ մտավոր հետամնացությունը, և՛ մարդու օժտվածությունը, նրա տաղանդավոր, հանճարեղ լինելը: Առողջապահության համաշխարհային կազմակերպության որոշմամբ՝ օժտված երեխաները ևս համարվում են «ռիսկի խմբի» երեխաներ՝ մտավոր հետամնացություն, իրավախախտ վարքագիծ, ալկոհոլի օգտագործման հակում ունեցող երեխաների կողքին: Նրանց

անհրաժեշտ են դաստիարակչական հատուկ միջոցներ ու մեթոդներ, անհատական զարգացման հատուկ ուսումնական ծրագրեր, հատուկ պատրաստականություն ունեցող ուսուցիչներ, հատուկ դպրոցներ [1, էջ 381]:

Օժտվածությունը մարդու բնածին առանձնահատկությունների ամբողջությունն է, որը նախադրյալ է ընդունակությունների զարգացման համար: Ռուս մեծ մանկավարժ Վ. Ն. Մորոկա-Ռոսինսկին դժվար դաստիարակվող երեխաների երրորդ խումբը համարում էր օժտված երեխաների խումբը [2, էջ 142]: Այս խմբին են պատկանում հուզականային, հուզահաղորդակցական խախտումներով և որոշակի օժտվածությամբ երեխաները, որոնց բնորոշ են ագրեսիվությունը, զգացողությունների անբավարար կառավարումը, բնավորության որոշ գծերի շեշտադրումը, մտածողության յուրատիպությունը, հակակարգապահական, հակասոցիալական արարքները, որոնք ինչ-որ իրավիճակում կամ պայմաններում կարող են փոխակերպվել օրինակելի վարքաձևերի: Միևնույն ժամանակ նրանք ունեն ստեղծագործական մեծ էներգիա, ընդունակություններ, հետաքրքրություններ, իրենց տարիքի երեխաներից տարբերվում են ուսման նկատմամբ ունեցած վերաբերմունքով, աշխատունակությամբ:

Օժտված երեխան ընտանիքի, ծնողների համար «ընտանիքի կուռք, պաշտամունք» կարող է համարվել: Այս մոտեցման պայմաններում երբեմն ծնողներն իրենց երեխաների ընդունակությունները չափից բարձր են գնահատում, իրենք՝ երեխաները, ունեն բարձր ինքնագնահատական, որը հաճախ կարող է հանգեցնել հուսալքության: Առավել ևս դա վտանգավոր է դառնում դեռահասության տարիքում:

Ծնողներն իրենց երեխաների ունեցած այս կամ այն հաջողությունը, արարքները արձանագրում են որպես երեխաների մոտ դրսևորվող օժտվածության փաստ: Այդ մասին նրանք միշտ պատմում են և խոսում: Կատարվում են երեխաների բոլոր պահանջները ու ցանկությունները, նրանց ամեն ինչ թույլատրվում է, ներվում են անգամ նրանց որոշ արարքներն ու բացթողումներն ուսման կամ այլ բնագավառներում:

Ուստի շատ կարևոր են դառնում ծնողների, ուսուցիչների, սոցիալական մանկավարժի և այլ մասնագետների կողմից երեխայի օժտվածության փաստի ժամանակին և ճիշտ բացահայտումն ու ախտորոշումը:

«Սոցիալական մանկավարժը պետք է առաջին հերթին հիշի, որ ինչպիսի օժտվածությամբ էլ լինի երեխան, նա պետք է սովորի» [3, էջ 383]:

Օժտված երեխաների հետ աշխատանքում սոցիալական մանկավարժի կողմից կիրառվում են հաղորդակցական-տեղեկատվական տեխնոլոգիաներ, որոնց միջոցով կարելի է ստեղծել փոխազդեցություններ և փոխներգործություններ, լուծել հուզող խնդիրները, բավարարել գոյաբանական, հոգևոր ու նյութական պահանջմունքները, զարգացնել ինքնաձանաչողությունը: Կիրառվում են նաև կազմակերպչական տեխնոլոգիաներ, իրականացվում է դաստիարակչական խորհրդատվություն (երկարաժամկետ, կարճաժամկետ, պարբերական, հրատապ-իրավիճակային) սոցիալ-մանկավարժական բոլոր ոլորտներում:

Օժտված երեխաների հետ սոցիալական մանկավարժի գործունեությունը նպատակաուղղված է երեխայի ունեցած հսկայական ներուժը ստեղծագործական աշխատանքի փոխակերպմանը, ստեղծագործական միջավայրի, երեխայի անձի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, նրանց անհրաժեշտ տարբեր տեսակի օգնության և աջակցության ցուցաբերմանը [4, էջ 302-306]:

Երեխան և նրա ծնողները պետք է հասկանան, որ տաղանդավորությունը մեծ աշխատանք է: Հնարավոր անհաջողությունները կամ թեթև հաջողությունը չի հիասթափեցնելու երեխային, որ հրաժարվի դրված նպատակից: Սոցիալական մանկավարժին կարևոր է տաղանդավոր երեխայի հետ հաստատել ճիշտ հարաբերություններ և հիշել, որ նրան անհրաժեշտ է կրթել, սովորեցնել նստակեցություն, սեր աշխատանքի նկատմամբ, ընդունելու ինքնուրույն որոշում:

Սոցիալական մանկավարժին անհրաժեշտ է օգնել կազմելու երեխայի տաղանդի զարգացման ծրագիրը, որը նախատեսում է թեմաների բազմազանություն և գործնական ուսուցում: Այդ հնարավորություն կտա որոշելու երեխայի ուժեղ և թույլ կողմերը, աջակցելու նրա հետաքրքրություններին:

Տաղանդավոր երեխայի հետ աշխատելու ծրագրի նպատակն է սովորեցնել ապրել հասարակության մեջ, որը միշտ չէ, որ բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերում միջին տաղանդաբնակից տարբերվողի նկատմամբ: Երեխային անհրաժեշտ է սոցիալական հմտություններ: Այստեղ կարող են օգնել բազմապիսի ուսուցողական գրքեր և

սկավառակներ, սակայն ավելի լավ է մասնակցել խմբային խաղերում, քանի որ տաղանդավոր երեխային անհրաժեշտ է շփվել ուրիշ երեխաների հետ: Երեխային չպետք է զրկել մանկությունից և ծանրաբեռնել: Միայն ուսումնասիրելով իր վերաբերմունքը այդ երեխայի նկատմամբ՝ սոցիալական մանկավարժը կարող է որոշել իր և նրա փոխհարաբերությունը: Անհրաժեշտ է հասկանալ նրա յուրահատկությունները, որն է նրա ծնողների հպարտության պատճառը: Պետք է նշել նաև, որ տաղանդավոր երեխան կուրացնում է ծնողներին. նրանք կարող են ճնշել նրան՝ մոռանալով այն մասին, որ երեխան չի սիրում ճնշվածություն: Ընտանիքում այդ պատճառով առաջանում են կոնֆլիկտներ:

Տաղանդավոր երեխաների ոչ միօրինակ վարքը արտահայտվում է սրամաղրության հաճախ փոփոխման մեջ, անհամբեր են շփման մեջ, գրուցակցին ընդհատում և ուղղում են, ցուցադրում են սեփական գիտելիքները, միշտ աշխատում են հաստատել իրենց ճշմարտությունը: Բոլոր այս հատկանիշները պահանջում են նախ և առաջ դաստիարակել համբերություն և ոչ կայունություն: Տաղանդավոր երեխաները գիտեն՝ ինչ է բարությունը, ճշմարտությունը և գթասրտությունը, սակայն գործնականում այդ հատկանիշները հաճախ չեն կարողանում դրսևորել: Նրանց անհրաժեշտ է մասնագետի՝ սոցիալական մանկավարժի օգնությունը: Հարցասիրությունը և ամեն ինչ իմանալու ձգտումը, հզոր ստեղծագործական կարողությունը վեր է ածվում վարքի նորմերի խախտման և լարում հարաբերությունները շրջապատի հետ:

«Սոցիալական մանկավարժի դերը օժտված երեխաների հետ աշխատանքում» հոդվածի շուրջ փորձարարական մասն իրականացվել է Վանաձորի Դանիել Վարուժանի անվան թիվ 16, Հովհաննես Թումանյանի անվան թիվ 3 հիմնական, Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ «Էվրիկա» հատուկ դպրոցներում, Լոռու մարզի Երեխայի և ընտանիքի աջակցման կենտրոնում, Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի Վանաձորի մասնաճյուղում:

Հետազոտություններին մասնակցել են թվով 35 անձինք:

Աշխատանքն իրականացվել է երկու փուլով.

- 7. Ախտորոշիչ փուլ** - ուղղված է օժտված երեխաներին բացահայտելուն:

8. Բուն հետազոտական փուլ - կիրառվել են սոցիալական մանկավարժի՝ օժտված երեխաների հետ աշխատանքի հիմնական մեթոդներ:

Հետազոտության ընթացքում օգտագործել ենք տարբեր գործիքներ.

✓ **Դիտման մեթոդ** – նպատակն էր ուսումնասիրել երեխաների ուսումնական, ստեղծագործական ձեռքբերումները:

✓ **Հարցազրույցի մեթոդ** – կիրառել ենք դպրոցների, Երեխայի և ընտանիքի աջակցման կենտրոնի սոցիալական մանկավարժների հետ: Նպատակն էր պարզել, թե սոցիալական մանկավարժներն ինչպես են ախտորոշում երեխաների օժտվածությունը, ինչպիսի խնդիրների հետ են բախվում օժտված երեխաները դպրոցում, և ինչպիսի մեթոդներով են սոցիալական մանկավարժներն աշխատում օժտված երեխաների հետ:

✓ **Սոցիալական անձնագրերի վերլուծություն** - նպատակն էր վերլուծել ուսումնական տարվա ձեռքբերումները, ենթադրյալ օժտվածություն ունեցող երեխաների ընտանեկան բարենպաստությունը:

✓ **Թեստավորում** - նպատակն էր օժտված երեխաների բացահայտումը, համապատասխանաբար՝ ինտելեկտուալ ընդունակությունների զարգացման, կրեատիվության և մոտիվացիայի մակարդակների ուսումնասիրմամբ:

✓ **Անկետավորում** – սոցիալական մանկավարժի՝ օժտված երեխաների հետ աշխատանքի պատրաստվածության մակարդակի ախտորոշման նպատակով օգտագործել ենք նաև Ա. Ի. Դորովսկայայի «Սոցիալական մանկավարժի պատրաստակամության հետազոտում» անկետան [տես՝ հավելված 3-ում] և «Օժտված երեխայի հետ աշխատող մանկավարժի» անկետան [տես՝ հավելված 4-ում]:

✓ **«ТРИЗ» տեխնոլոգիան** – հեղինակը Հենրիխ Ալտշուլյերն է: Նախատեսված է երեխաների ստեղծագործական, վերլուծական մտածողության զարգացման համար: Այն իր մեջ ներառում է մի քանի մեթոդների համակարգ, որոնցից առանձնացված են հետևյալները՝ «Մտագրոհ» և «ԳՈՒՄ»: Սրան զուգընթաց՝ սոցիալական մանկավարժի կողմից նաև կիրառվեց «ՏՀՏ» տեխնոլոգիան՝ նպատակ ունենալով երեխաներին ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ, օգնում է երեխաներին ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները, հնարավորություն է տալիս քննարկվող հարցի շուրջ բանավիճել, իսկ բանավեճի արդյունքում ծնվում է ճշմարտությունը:

Սոցիալական մանկավարժը պլանի համաձայն աշխատանքներ է իրականացնում օժտված երեխաների, նրանց ծնողների ու շրջապատի հետ: Այս նպատակով ներկայացնում ենք սոցիալական մանկավարժի աշխատանքի պլանի օրինակ (մշակված սեփական տարբերակը) [տես՝ հավելված 1-ում]:

Որպեսզի երեխաների օժտվածությունը «չմարի», այլ, ընդհակառակը, զարգանա, սոցիալական մանկավարժն աշխատում է նաև երեխայի ծնողների հետ: Կազմակերպում է քննարկումներ, ժողովներ: Այդպիսի քննարկման օրինակ ներկայացրել ենք նաև մենք [տես՝ հավելված 2-ում]:

Հետազոտական աշխատանքները իրականացվել են երկու հիմնական նպատակներով՝

- Բացահայտել տվյալ հաստատություններում օժտված երեխաներին:

- Առանձնացնել այն հիմնական մեթոդները, որոնց օգնությանն է դիմում սոցիալական մանկավարժը՝ օժտված երեխաների հետ աշխատելիս:

Հետազոտությունների ժամանակ հարցազրույցներ ունեցանք Երեխայի և ընտանիքի աջակցման կենտրոնի, Վանաձորի թիվ 3, 16 դպրոցների սոցիալական մանկավարժների հետ, որի ընթացքում փորձեցինք պարզել, թե ինչպիսի մեթոդների օգնությամբ են մանկավարժները բացահայտում երեխաների օժտվածությունը, ինչպիսի խնդիրների հետ են բախվում օժտված երեխաները և ինչպիսի աշխատանքներ են կազմակերպվում մանկավարժների կողմից [տես՝ հավելված 3]: Ամփոփելով հարցազրույցի արդյունքները՝ կարելի է ընդգծել հետևյալ փաստերը՝ երեխաների օժտվածությունը բացահայտելու նպատակով սոցիալական մանկավարժները հիմնականում կիրառում են թեստերի տարբեր օրինակներ (հարցարաններ, հարցազրույցի մեթոդը, մոդելավորում, կենսագրական մեթոդ), որոնք նախատեսված են երեխաների ինտելեկտուալ հնարավորությունները, կրեատիվության մակարդակը ախտորոշելու համար: Սոցիալական մանկավարժները ընդգծում էին մի քանի հիմնական խնդիրներ, որոնց հետ բախվում է օժտված երեխան դպրոցում: Դրանցից էին՝ մտերիմ ընկերներ գտնելու հետ կապված դժվարություններ, երեխայի ստեղծագործական ընդունակությունների՝ շրջապատի կողմից անհասկացվածություն ու քննադատություն, տազնապայանություն, որը կարող է պայմանավորված լինել նրանով, որ

օժտված երեխաների սպասելիքները հասակակիցներից և նրանց շփման պահանջները չեն համապատասխանում: Օժտված երեխաներն ունենում են ինքնարտահայտման վախ, որոշ դեպքերում հուզական անկայունություն: Այս և նմանատիպ խնդիրների լուծման նպատակով սոցիալական մանկավարժն աշխատանք է իրականացնում երեխաների հետ: Աշխատանքներից են հոգեբանաթերապևտիկ աշխատանքը: Օժտված երեխաներին բնորոշ առանձնահատկություններից է հետաքրքրության որակը և աստիճանը: Օժտված երեխաների մոտ նկատելի է հատորներով գիրք կարդալու տենչը: Կարդում են գիշերային ժամերին կամ էլ դրսևորում են պրակտիկ հմտություններ, որոնք զարմանք են առաջացնում: Այսպիսի առանձնահատկություններով աչքի էր ընկնում Նապոլեոնը: Այս հատկանիշներից ելնելով՝ մասնագետներն օժտված երեխաներին առաջարկում են գրքի միջոցով անցկացվող թերապիա՝ բիրիոթերապիա: Սոցիալական մանկավարժները օժտված երեխաների հետ տարվող աշխատանքների մասին խոսելիս ներկայացրել են ախտորոշիչ ուղղությունը, զրույցներ, թրեյնինգներն ու խորհրդատվությունները, անհրաժեշտության դեպքում հանդիսանում են միջնորդ ընտանիքի և դպրոցի միջև:

Հետազոտական աշխատանքի առաջին փուլը կառուցել ենք Ջ. Ռենզուլիի եռամսյակ հոգեդիագնոստիկ համակարգի հիման վրա, որտեղ օժտվածությունն իրենից ներկայացնում է երեք կարևոր բաղադրիչների միասնություն՝ ինտելեկտուալ ընդունակություններ, կրեատիվություն (ստեղծարարություն), մոտիվացիա: Ըստ այս մոդելի՝ օժտված են համարվում այն երեխաները, ովքեր թվարկված բոլոր բաղադրիչներից կզրանցեն առավելագույն արդյունքներ:


Այդ նպատակով համապատասխանաբար կիրառեցինք՝ «Ստենֆորդ-Բինե»-ի թեստը, Հ. Գարդների «Ինտելեկտի տիպի ախտորոշում» թեստը, «Մաթեմատիկական ընդունակությունների ախտորոշման» մեթոդիկան, Ռավենի «Պրոգրեսիվ մատրիցան», Թորենսի «Ստեղծագործական մտածողության ախտորոշում» թեստը, Ե. Պ. Իլիինի «Հաջողության հասնելու մոտիվացիան», Կուզնեցովայի, Սվերչի «Ինչպես բացահայտել օժտվածությունը» և Սավենկովի «Օժտվածության քարտեզը»:

Ամփոփելով կատարած հետազոտական աշխատանքի այս փուլը՝ կարող ենք ասել, որ օժտված երեխաների բացահայտումը բավականին բարդ էր, քանի որ գոյություն չունի ամբողջական, կոնկրետ մեթոդ, որի օգնությամբ կկարողանանք գնահատել երեխաների օժտվածությունը:

Աշխատանքի այս փուլում կիրառեցինք սոցիալական մանկավարժի կողմից օգտագործվող այն հիմնական մեթոդները, որոնք անհրաժեշտ են օժտված երեխաներին բացահայտելու համար: Վերլուծելով արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ 19 դիտարկված աշակերտներից պոտենցիալ օժտվածություն ունեն 4-ը [տես՝ հավելված 4-ում]:

Նրանք ունեին ինտելեկտուալ ընդունակությունների միջինից բարձր, կրեատիվության և մոտիվացիայի բարձր մակարդակներ [տես՝ դիագրամ 1-ում]:

Դիագրամ 1.



Ընդհանրացնելով կատարած փորձարարական աշխատանքը՝ կարող ենք ընդգծել, որ սոցիալական մանկավարժն օժտված երեխաներին ախտորոշելու նպատակով կիրառում է դիտման, զրույցի, թեստավորման, անկետավորման, կենսագրական մեթոդները: Իհարկե, այս մեթոդները կիրառվում են ոչ միայն երեխաների, այլև նրանց ծնողների հետ:

Բացահայտելով օժտված երեխաներին՝ սոցիալական մանկավարժը պլանի կետերին համապատասխան աշխատանքներ է սկսում երեխաների հետ: Սոցիալական մանկավարժի աշխատանքն այստեղ ուղղված է երեխաների ընդունակությունների զարգացմանն ու օժտված երեխաների խնդիրների հաղթահարմանը:

Առանձնացնենք մի քանի մեթոդների օրինակներ, որոնց օգնությամբ սոցիալական մանկավարժը աշխատում է օժտված երեխաների հետ:

«Մտագրոհ» - կիրառվում է երեխաների ստեղծագործական-վերլուծական մտածողության զարգացման նպատակով: Առաջարկվում է խնդիր, որն ունի բազմաթիվ լուծումներ: Երեխան պետք է արտահայտի

իր մտքերն ու գաղափարները խնդրի վերաբերյալ: Այնուհետև քննարկվում են տարբերակները:

«Քեյսի մեթոդ» - նպաստում է անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանն ու հմտությունների ձևավորմանը: Օժտված երեխաների հետ աշխատելիս սոցիալական մանկավարժը կիրառում է քեյս, որի նպատակն է զարգացնել երեխաների ստեղծագործական ընդունակությունները, արագ կողմնորոշվելու ունակությունները, մոտիվացիայի մակարդակը:

Օժտված երեխաները ունենում են հասակակիցների հետ շփման դժվարություններ, մտերիմ ընկերներ գտնելու հետ կապված դժվարություններ: Սոցիալական մանկավարժը կիրառում է «Գաղափարների կառուցման մեթոդը»: Նպաստում է կոլեկտիվ ստեղծագործական «արտադրանքի» ստեղծմանը, միասնական, ընդհանուր գաղափարի սահմանմանը:

Օժտված երեխաների հետ աշխատանքի արդյունավետությունն ապահովելու նպատակով դպրոցներում ներդրվում է Մեծ Բրիտանիայում ընդունված «Կարգավորում» (Setting) մեթոդը: Այն հնարավորություն է տալիս երեխաներին ընդգրկվել խմբերում՝ ըստ առարկայական ձեռքբերումների մակարդակի:

Սոցիալական մանկավարժի կողմից կիրառվում են նաև թրեյնինգներ, խորհրդատվություն, քննարկումներ, սեմինարներ, մոդելավորման, խաղային, քարտային ու տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներ: Սոցիալական մանկավարժն օժտված երեխաների հետ աշխատանքը կառուցում է *կույր որոնման մոդելի վրա*, որը հիմնված է փորձ և սխալի մեթոդի վրա, *լաբիրինթոս մոդելի հիման վրա*, որում խնդիրը դիտարկվում է որպես լաբիրինթոս, իսկ լուծում փնտրելու գործընթացը նման է լաբիրինթոսում շրջելուն: «Տաղանդի զարգացման ծրագիր» մոդելը հնարավորություն է տալիս բարձրացնել օժտված երեխաների ճանաչողական հետաքրքրությունը, զարգացնել ստեղծագործական ընդունակությունները: Հնարավորություն է տալիս որոշել երեխայի ոժեղ և թույլ կողմերը, աջակցել նրա ընդունակությունների զարգացմանը:

	Աշխատանքի նկարագրություն	Նպատակը	Պատասխանատու	Ժամկետներ
1.	«Օժտված երեխաներ» թեմայով կլոր սեղան մանկավարժների ու բազմամասնագիտական թիմի անդամների հետ	«Օժտված երեխա» հասկացության պարզաբանում, տալ մի շարք հարցերի պատասխանները ինչ է օժտվածությունը, որ երեխաներին կարելի է օժտված համարել, որոնք են օժտվածության նշանները և տեսակները:	Սոցիալական մանկավարժ, բազմամասնագիտական թիմ	Օգոստոս
2.	«Օժտված երեխա» ծրագրի մշակում	Նորմատիվ-իրավական բազայի ստեղծում, օժտված երեխաների ախտորոշման համակարգի ստեղծում, օժտված երեխաների հետ անհատական աշխատանքի ձևերի ու մեթոդների մշակում:	Սոցիալական մանկավարժ, բազմամասնագիտական թիմ, տնօրինություն	Օգոստոս-սեպտեմբեր
3.	«Օժտված երեխաներ» տվյալների բանկի ստեղծում	Օժտված երեխաների ախտորոշում, սոցիալական փաստաթղթերի վերլուծություն, անհատական թղթապանակի ձևավորում, սովորողների ձեռքբերումների վերլուծություն	Հոգեբան, սոցիալական մանկավարժ	Սեպտեմբեր-հոկտեմբեր
3.1	Անկետաների, թեստերի ու անհատական գրույցների կիրառում	Սովորողների հետաքրքրությունների ու ընդունակությունների ոլորտի ուսումնասիրում	Սոցիալական մանկավարժ, հոգեբան	Սեպտեմբեր-հոկտեմբեր
4.	Թեմատիկ գրույցների, քննարկումների կազմակերպում	Պարզել երեխաների ուսումնական խնդիրները, ձևավորել սովորողների տեղեկատվական կուլտուրան, կատարել ակադեմիական գիտելիքների ընդհանրացում և համակարգում:	Սոցիալական մանկավարժ	Հոկտեմբեր-նոյեմբեր
5.	Մրցույթներ, օլիմպիադաներ, ինտելեկտուալ «մրցավազք»	Նպաստել օժտված երեխաների ճանաչողական ընդունակությունների զարգացմանը, որոնողական, հետազոտական գործընթացում սովորողների վերլուծական և քննադատական մտածողության ձևավորում	Մանկավարժներ, տնօրինություն, բազմամասնագիտական թիմ	Հոկտեմբեր-մայիս (յուրաքանչյուր տարի)
6.	Ծնողական ժողովներ, քննարկումներ	Ծնողներին իրազեկել երեխաների օժտվածության նախանշանների, նրանց ընդունակությունների զարգացման աշխատանքների, օժտվածության մարելու հնարավոր ռիսկերի մասին:	Սոցիալական մանկավարժ, հոգեբան	Նոյեմբեր-դեկտեմբեր

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՕԺՏՎԱԾ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿ

Նպատակը- ընդգծել ընտանիքի դերը օժտված երեխաների պոտենցիալ հնարավորությունները զարգացնելու գործում:

Աշխատանքի ձևը-կլոր սեղան

Մասնակիցներ-օժտված երեխաների ծնողներ, սոցիալական մանկավարժ, հոգեբան

Գործիքակազմ-անկետաներ օժտված երեխաների համար, օժտվածությանը վերաբերող հոգեբանամանկավարժական գրականություն:

Պլան

- «Օժտվածություն», «օժտված երեխա» հասկացությունների մեկնաբանում (սոցիալական մանկավարժ, հոգեբան):
- Օժտված երեխաների հոգեբանական առանձնահատկությունների մեկնաբանում (հոգեբան):
- Ընտանիքի դերը օժտված երեխաների բացահայտման գործում: Խորհուրդներ ծնողներին (սոցիալական մանկավարժ):
- Անկետավորում ծնողների հետ՝ «Ինչպես բացահայտել օժտվածությունը» (հոգեբան):
- Երեխաների ստեղծագործությունների ցուցահանդես: Կարծիքների փոխանակում, հարցերի պարզաբանում (սոցիալական մանկավարժ):
- Ժողովի ամփոփում: Դրա արդյունավետության գնահատումը ծնողների կողմից:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

1. Ի՞նչ է օժտվածությունը:

2. Ինչպիսի՞ առանձնահատկություններով կրնորոշեք օժտված երեխաներին:

3. Որպես սոցիալական մանկավարժ ինչպիսի՞ մեթոդներով եք ախտորոշում օժտված երեխաներին:

4. Ինչպիսի՞ խնդիրների են բախվում օժտված երեխաները դպրոցում:

5. Ո՞ր մեթոդները կընդգծեք օժտված երեխաների հետ արդյունավետ աշխատելու համար:

6. Կարո՞ղ եք նշել մի քանի այլ սուբյեկտներ, որոնց հետ աշխատանքը կարևոր է օժտված երեխաների զարգացումն ապահովելու համար:

7. Ինչպե՞ս եք իրականացնում օժտված երեխաների ծնողների հետ աշխատանքները:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Աշակերտների տվյալները	Տարիքը	«Մտենֆորդ-Բինե»-ի թեստ	Գարդներ «Բնտելեկտի տիպի ախտորոշում»
Ա. Ս. (թիվ 16 դպրոց)	10	119 միավոր	մաթեմատիկական-տրամաբանական
Ս. Դ. (թիվ 16 դպրոց)	12	58 միավոր	տեսողատարածական
Շ. Շ. (թիվ 16 դպրոց)	9	54 միավոր	կինեսթետիկ
Ա. Վ. (թիվ 16 դպրոց)	11	80 միավոր	մաթեմատիկական-տրամաբանական
Ի. Շ. (թիվ 16 դպրոց)	13	76 միավոր	միջանձնային
Ն. Ա. («Էվրիկա» դպրոց)	12	115 միավոր	տեսողատարածական
Ա. Ս. («Էվրիկա» դպրոց)	13	119 միավոր	մաթեմատիկական-տրամաբանական
Կ. Ն. («Էվրիկա» դպրոց)	11	76 միավոր	խոսքային
Շ. Կ. («Էվրիկա» դպրոց)	11	80 միավոր	մաթեմատիկական-տրամաբանական
Ա. Ս. («Էվրիկա» դպրոց)	13	36 միավոր	ներանձնային
Մ. Ն. (թիվ 3 դպրոց)	9	80 միավոր	միջանձնային
Ա. Ն. (թիվ 3 դպրոց)	10	115 միավոր	տեսողատարածական
Դ. Գ. (թիվ 3 դպրոց)	8	119 միավոր	մաթեմատիկական-տրամաբանական
Գ. Վ. (թիվ 3 դպրոց)	11	68 միավոր	երաժշտական
Շ. Ա. (գեղագիտական կենտրոն)	8	80 միավոր	խոսքային
Հ. Խ. (գեղագիտական կենտրոն)	9	36 միավոր	տեսողատարածական
Մ. Մ. (գեղագիտական կենտրոն)	10	22 միավոր	տեսողատարածական
Վ. Ս. (աջակցման կենտրոն)	12	76 միավոր	միջանձնային
Հ. Ղ. (աջակցման կենտրոն)	9	113 միավոր	մաթեմատիկական-տրամաբանական

ՊՈՏԵՆՑԻԱԼ ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՄԱՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Աշակերտների տվյալները	Ռավենի պրոգրեսիվ մատրիցա	Թորենսի Ստեղծագործական մտածողության ախտորոշում
Ա. Ս. (թիվ 16 դպրոց)	Բարձր մակարդակ	Միջին մակարդակ
Ս. Դ. (թիվ 16 դպրոց)		
Շ. Շ. (թիվ 16 դպրոց)		
Ա. Վ. (թիվ 16 դպրոց)		
Ի. Շ. (թիվ 16 դպրոց)		
Ն. Ա. («Էվրիկա» դպրոց)	Միջին մակարդակ	Միջին մակարդակ
Ա. Մ. («Էվրիկա» դպրոց)	Բարձր մակարդակ	Միջին մակարդակ
Կ. Ն. («Էվրիկա» դպրոց)		
Շ. Կ. («Էվրիկա» դպրոց)		
Ա. Ս. («Էվրիկա» դպրոց)		
Մ. Ն. (թիվ 3 դպրոց)		
Ա. Ն. (թիվ 3 դպրոց)	Ցածր մակարդակ	Ցածր մակարդակ
Դ. Գ. (թիվ 3 դպրոց)	Միջին մակարդակ	Բարձր մակարդակ
Գ. Վ. (թիվ 3 դպրոց)		
Շ. Ա. (գեղագիտական կենտրոն)		
Հ. Խ. (գեղագիտական կենտրոն)		
Մ. Մ. (գեղագիտական կենտրոն)		
Վ. Ս. (աջակցման կենտրոն)		
Հ. Ղ. (աջակցման կենտրոն)	Միջին մակարդակ	Ցածր մակարդակ
Աշակերտների տվյալները	Ռավենի պրոգրեսիվ մատրիցա	Թորենսի Ստեղծագործական մտածողության ախտորոշում
Ա. Ս. (թիվ 16 դպրոց)	Բարձր մակարդակ	Միջին մակարդակ
Ս. Դ. (թիվ 16 դպրոց)		
Շ. Շ. (թիվ 16 դպրոց)		
Ա. Վ. (թիվ 16 դպրոց)		
Ի. Շ. (թիվ 16 դպրոց)		
Ն. Ա. («Էվրիկա» դպրոց)	Միջին մակարդակ	Միջին մակարդակ
Ա. Մ. («Էվրիկա» դպրոց)	Բարձր մակարդակ	Միջին մակարդակ
Կ. Ն. («Էվրիկա» դպրոց)		
Շ. Կ. («Էվրիկա» դպրոց)		
Ա. Ս. («Էվրիկա» դպրոց)		
Մ. Ն. (թիվ 3 դպրոց)		
Ա. Ն. (թիվ 3 դպրոց)	Ցածր մակարդակ	Ցածր մակարդակ
Դ. Գ. (թիվ 3 դպրոց)	Միջին մակարդակ	Բարձր մակարդակ

Գ. Վ. (թիվ 3 դպրոց)		
Շ. Ա. (գեղագիտական կենտրոն)		
Հ. Խ. (գեղագիտական կենտրոն)		
Մ. Մ. (գեղագիտական կենտրոն)		
Վ. Ս. (աջակցման կենտրոն)		
Հ. Ղ. (աջակցման կենտրոն)	Միջին մակարդակ	Ցածր մակարդակ
Աշակերտների տվյալները	Ռավենի պրոգրեսիվ մատրիցա	Թորենսի Ստեղծագործական մտածողության ախտորոշում
Ա. Ս. (թիվ 16 դպրոց)	Բարձր մակարդակ	Միջին մակարդակ
Ս. Դ. (թիվ 16 դպրոց)		
Շ. Շ. (թիվ 16 դպրոց)		
Ա. Վ. (թիվ 16 դպրոց)		
Ի. Շ. (թիվ 16 դպրոց)		
Ն. Ա. («Էվրիկա» դպրոց)	Միջին մակարդակ	Միջին մակարդակ
Ա. Մ. («Էվրիկա» դպրոց)	Բարձր մակարդակ	Միջին մակարդակ
Կ. Ն. («Էվրիկա» դպրոց)		
Շ. Կ. (Էվրիկա դպրոց)		
Ա. Ս. (Էվրիկա դպրոց)		
Մ. Ն. (թիվ 3 դպրոց)		
Ա. Ն. (թիվ 3 դպրոց)	Ցածր մակարդակ	Ցածր մակարդակ
Դ. Գ. (թիվ 3 դպրոց)	Միջին մակարդակ	Բարձր մակարդակ
Գ. Վ. (թիվ 3 դպրոց)		
Շ. Ա. (գեղագիտական կենտրոն)		
Հ. Խ. (գեղագիտական կենտրոն)		
Մ. Մ. (գեղագիտական կենտրոն)		
Վ. Ս. (աջակցման կենտրոն)		
Հ. Ղ. (աջակցման կենտրոն)	Միջին մակարդակ	Ցածր մակարդակ

РОЛЬ СОЦИАЛЬНОГО ПЕДАГОГА В РАБОТЕ С ОДАРЕННЫМИ ДЕТЬМИ. ЭКСПЕРИМЕНТАЛЬНАЯ ЧАСТЬ

Марукян Л. Р.

Статья посвящена роли социального педагога в работе с одаренными детьми. Речь идет о понятиях «одаренность», «одаренный ребенок», о деятельности социального педагога.

Статья включает экспериментальную часть, которая была сделана в школах и образовательных центрах Ванадзора. База данных представлена в виде "приложений" /таблицы/.

В настоящий период особенно важным становится своевременное и правильное выявление и диагностика факта наличия у ребенка родителей, учителей, социальных педагогов и других специалистов.

Ключевые слова: одаренный ребенок, социальный педагог, талант, исследование, сфера деятельности педагога.

THE ROLE OF A SOCIAL PEDAGOGUE IN WORKING WITH GIFTED CHILDREN: EXPERIMENTAL STUDY

Marukyan L. R.

The paper presents the role of social pedagogue working with gifted children.

We touch upon concepts "gifted", "exceptional child", the work of the social teacher who develops skills among these children.

The article includes an experimental study that was conducted in schools, Vanadzor centers and the corresponding department of the regional administration. The database is presented separately as "attachments" (in the table).

Timely and accurate identification and diagnosis of child support by parents, teachers, social pedagogues and other specialists is especially important at this time.

Keywords: a gifted child, social pedagogue, talent, research, sphere of activity of the teacher.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Василькова Ю. В., Василькова Т. А. « Социальная педагогика », М., 2изд. Центр «Академия». 2000 г. 440 с.
2. Мардахаев Л. В. «Социальная педагогика». М.: 2005 г. 269 с.
3. Василькова Ю. В. «Методика и опыт работы социального педагога», М.: центр «Академия». 2001 г. 160 с.
4. Հարությունյան Ն. Կ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ. Սոցիալական մանկավարժություն: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 2017: 336 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին

Մարուքյան Լ. Ռ. – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Վանաձորի պետական համալսարան

Էլ. փոստ՝ lusine.marukyan@mail.ru

Տրվել է խմբագրություն 21.10.2019